Բ

Ի ԿԵՐՋԷ ՄԻՆՉԵՒ ՅԹԱՑՂԱՆ.

Ռուսաց մեծ Փուշքին կոչուած չոգենաւով մեկ-ցանք 'ի Թէոդոսիոյ, մի քանի Նախիջևանցի երիտա-սարդ բարեկամաց հետ 'ի 28 ապրիլի, գիշերուան ժամը տասին. միւս օր առաւօտուն արևածագին հասանք 'ի Կերջ։ Որովհետև մեծ նաւ է Փուշքին՝ նաւապետն զգուշացաւ նեղուցէն ներս մտնել, այլ կանգ առաւ բաց ծովուն վրայ, առաջին կարգի մեծ բերդերուն դիմաց, որք կը պաշտպանեն զնեղուցը։ Արդէն ինձ 'ի վաղուց ծանօթ էր տեղին, և չկար ինչ անսովոր կամ հետաքրքրութեան արժանի. այն պատճառաւ՝ նաւին խորը, առաւօտեան քաղցր քունը կը քաշէի. սակայն երբ մեծ շառաչմամբ խա-բիսխ ձգեց նաւն, և կը սպասէր որ փոքր չոգենաւ մի գայ՝ Կերջի ճանապարհորդները կրելու համար, հարկ եղաւ ինձ անուշիկ քունս ընդմիջելով փութալ 'ի վեր՝ նաւուն տախտակամածին վրայ։

Ի ծովէ չունի Կերջ այն ակնապարար և հաճոյա-կան երևոյթը, ինչ որ կ'ընծայեն Եալբթա և այլ գիւղօրէք հարաւային ափանց Ղրիմու. սակայն հան-դարտ կապուտակ ծովը, մեղմիկ և ջերին՝ ծովային գոլորշեաք տամուկ օդն, մայիսի առաւօտն, նոյն և դիմացս բարձրացած Միհրդատ կոչուած բլուրն ստորոտի մանեկաձև ձգուած տներով, թոքի և ա-չաց ոչ անհաճոյ ազդեցութիւն կ'ընէին։ Հարկ եղաւ սպասել զմեզ կրելի նաւուն՝ Փուշքինի վրայ։ Ան-ախորժ վիճակ է մարդուս համար՝ աչքը մի կողմ յառած սպասելը, յակամայ կամս մեք այդ վիճակին